



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԿԵՐԱՅՍԿՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ**

Ե/2222-24

0077, Երևան, Մ.Մաշտոցի պող. 47

18 Սեպտեմբերի, 2024թ.

**«ՀԵՏՔ» ԼՐԱԳՐՈՂ
ԳԱՅԱՆԵ ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ**

Էլ. փոստ՝ hovsepian.gay@gmail.com

Հարգելի՛ տիկին Հովսեփյան,

2024 թվականի օգոստոսի 14-ին ՀՀ պետական վերահսկողական ծառայություն (այսուհետ՝ Ծառայություն) մուտքագրված Ձեր թիվ Մ/2353-24 հարցման կապակցությամբ հայտնում եմ, որ Ծառայության կողմից 2022 թվականի փետրվարի 28-ից մինչ օրս, սահմանված ժամանակացույցի համաձայն, ՀՀ առողջապահության նախարարության պետական առողջապահական գործակալությունում (այսուհետ՝ ՊԱԳ) և ոլորտում գործունեություն ծավալող մի շարք բժշկական կազմակերպություններում իրականացվել և իրականացվում են ուսումնասիրություններ՝ պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բնակչությանը ցուցաբերվող բուժօգնության տրամադրման շրջանակներում ծառայությունների մատուցման մասին պայմանագրերի կնքման, հաշվետվությունների ընդունման և փոխհատուցման, մատուցված բժշկական ծառայությունների որակի և ծավալի վերահսկման, ֆինանսավորման և դրանց հետ կապված այլ գործառնությունների օրինականության և արդյունավետության նկատմամբ:

Ոլորտի ուսումնասիրություններն իրականացվել և իրականացվում են ՀՀ առողջապահության նախարարության ՊԱԳ համապատասխան մասնագետների ներգրավմամբ:

Մինչ օրս, բացի ՊԱԳ ուսումնասիրություններից, հանդիպակաց ուսումնասիրություններ են իրականացվել թվով 9 բժշկական կազմակերպություններում (այսուհետ՝ ԲԿ), որոնք երբևէ չեն ընդհատվել:

ԲԿ-ների ուսումնասիրությունների արդյունքում արձանագրվել է 634մլն ՀՀ դրամի տարաբնույթ խախտումներ և թերություններ, որից ՀՀ պետական բյուջե է վերականգնվել 256մլն ՀՀ դրամ, ինչպես նաև քաղաքացիներին է վերադարձվել 15,6մլն ՀՀ դրամ գումար:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ Ճառայությունն օրենքով իրեն վերապահված վերահսկողական լիազորություններն իրացնում է ոչ թե ստուգումների, այլ մշտադիտարկումների կամ ուսումնասիրությունների միջոցով: Բացի այդ, հարկ եմ համարում նշել, որ «Պետական վերահսկողական ծառայություն մասին» օրենքով (այսուհետ՝ Օրենք) խախտումների նախնական չափ եզրույթ գոյություն չունի, մինչդեռ համաձայն Օրենքով նախատեսված դրույթների՝ ուսումնասիրությունն ամփոփող տեղեկանքը տրամադրվում է վերահսկվող օբյեկտին՝ դրա վերաբերյալ կարծիք ներկայացնելու նպատակով: Այսուհետև, ուսումնասիրություններն ամփոփող տեղեկանքների վերաբերյալ վերահսկվող օբյեկտի կողմից առարկություններ ներկայացնելու դեպքում, դրանք քննարկվում են ՊԱԳ աշխատակիցների հետ, և հիմնավոր առարկությունների առկայության դեպքում, դրանք համարվում են ընդունելի, որոնք էլ կարող են պատճառ հանդիսանալ՝ տեղեկանքով արձանագրված որոշ ենթադրյալ խախտումների առաջացրած հետևանքների ծավալների վերանայման համար:

Յարկ է նշել, որ ուսումնասիրությունների արդյունքներն ամփոփող տեղեկանքների պատճենները հնարավոր չէ տրամադրել, քանի որ Օրենքով սահմանված կարգի համաձայն դրանք ամփոփվելուց հետո տրամադրվում են ՀՀ վարչապետին:

Տեղեկացնում եմ նաև, որ ուսումնասիրությունների արդյունքներով նախաձեռնվել են թվով 4 քրեական վարույթներ, որից թվով 1 քրեական վարույթի նախաքննությունը՝ ՊԱԳ և մի շարք հանդիպակաց ուսումնասիրությունների մասով, իրականացվում է ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում, իսկ թվով 3 քրեական վարույթների նախաքննությունը՝ ՀՀ քննչական կոմիտեում:

Բացի այդ, Ճառայության կողմից իրականացված վերահսկողական գործառույթների արդյունքում պարզվել է, որ բժշկական կազմակերպության կողմից պետական պատվերի շահառու հանդիսացող քաղաքացիներից նվիրատվության ձևով անհիմն ստացվել են գումարներ, մինչդեռ տվյալ ծառայությունների ֆինանսավորումն իրականացվել է պետական պատվերի շրջանակներում: Միաժամանակ Ճառայության պահանջով տվյալ բժշկական կազմակերպության կողմից բուժառուներին արդեն իսկ հետ է վերադարձվել շուրջ 50մլն ՀՀ դրամ և ներկայումս տարվում են աշխատանքներ՝ մնացած քաղաքացիներից ստացված հավելյալ գումարները բժշկական կազմակերպության կողմից հետ վերադարձնելու ուղղությամբ:

Վերոգրյալին հավելեմ նաև, որ առողջապահության ոլորտում ճառայության կողմից մեկնարկած վերահսկողական գործառույթը շարունակվում է:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

**ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏԻ ՎԵՐԱՅՍԿՈՂՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ**

ԳԱՐԻԿ ՂԱԶԱՐՅԱՆ

X _____

Կատարող՝ Լիդա Սահակյան
Ստորագրածանում՝ Սոցիալական ոլորտի վերահսկողության վարչություն
Հեռ.՝ 010 31-31-42